ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ԱՐՏԱԳԱՂԹԸ. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՈՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԻՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՌՈՒԲԷՆ ԵԳԱՆԵԱՆ
rubenyeg@mail.ru

ՄՈՒՏՔ

Յետխորհրդային շրջանում Հայաստանից արտագաղթի որակական եւ քանակական անցումների լիարժէք ընկալման, ներկայիս գաղթի իրողութիւնների հիմնաւոր գնահատման պարտադիր պայման է նախանցումային շրջանի եւ կացութեան համառօտ ներկայացումը:

Սակայն, մինչ դրան անցնելը, նշենք, որ այս ուսումնասիրութեան սահմաններում, արտագաղթը ընկալւում է, որպէս Հայաստանի արտաքին վարչական սահմանների հատում՝ ընտանեկան, կամ աշխատելու/ուսանելու/մշտական բնակութեան նպատակներով, ինչպէս նաեւ հարկադիր բնոյթ կրող, 3 եւ աւելի ամիս տեւողութեամբ մեկնումներ եւ ժամանումներ (վերադարձներ), այսինքն խորհրդային ժամանակաշրջանում՝ միջհանրապետական[1] եւ միջպետական[2], իսկ յետխորհրդայինում՝ միայն միջպետական, տեղաշարժերը:

ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ԱՐՏԱԳԱՂԹԻ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՆԱԽԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ (1960–80ԱԿԱՆՆԵՐ)

Անկախացումից առաջ, ՀԽՍՀից արտագաղթը ձեւաւորում էին թէ՛ ժամկէտային եւ թէ՛ նպատակային յատկանիշներով յստակօրէն տարբերակուող հետեւեալ երկու բաղադրամասերը.-

- մշտական գաղթ՝ մշտական բնակութիւն հաստատելու միտումով ժամանողների եւ մեկնողների զանգուածները.
- եղանակային աշխատանքային գաղթ՝ փող վաստակելու նպատակով ժամանակաւոր աշխատանքային մեկնումներ կատարողների[3] հոսքը:

ՄՇՏԱԿԱՆ ՀՈՍՔԵՐ

1960–70ականների ողջ ընթացքում վիճակն այս առումով գործնականում անփոփոխ էր: Ընթանալով տարեկան միջին հաշուով 13-14,000 մարդ դրական մնացորդով, այդ հոսքերն ապահովում էին Հայաստանի բնակչութեան աճի աւելի քան 1/5րդը: Այս իրավիճակը պայմանաւորող թէ՛ միջհանրապետական, թէ՛ միջպետական ենթահոսքերն էթնիկ բնոյթի էին: Մշտական բնակութեան էին գալիս ԽՍՀՄ այլ հանրապետութիւնների՝ գլխաւորապէս հայազգի հոծ բնակչութիւն ունեցող Վրաստանի եւ Ադրբեջանի հայ քաղաքացիները (դրական մնացորդի միջին տարեկան մեծութիւնը 9-10,000 մարդ), եւ հիմնականում Մերձաւոր Արեւելքում (Իրան, Սիրիա, Յորդանան եւն.) բնակուող սփիւռքահայերը (բացառապէս

որպէս պետականօրէն կազմակերպուած հայրենադարձու-թիւն իրականացուող այս ներհոսքը կազմում էր տարեկան 2-4,000 մարդ)[4]:

Սակայն, արդէն 1980ականների սկզբից, Հայաստանի ընկերատնտեսական զարգացման ընթացքի դանդաղման հետեւանքով, վիճակը՝ ընդ որում թէ՛ միջհանրապետական եւ թէ՛ միջպետական հոսքերի առումով, որակապէս փոխուեց: Դէպի Ռուսաստան վերաուղղորդման բերումով, նուազեց Վրաստանից եւ Ադրբեջանից ներհոսքը: Միւս կողմից, որոշակիօրէն աճեց Հայաստանից բնակչութեան միջհանրապետական արտահոսքը (եւս առաւելապէս դէպի Ռուսաստան):

Զուգահեռաբար, դէպի արեւմտեան երկրներ վերաուղղորդման բերումով, գրեթէ դադարեց սփիւռքահայերի ներհոսքը: Աւելին, 1975ի Հելսինկեան Գագաթաժողովի[5] արդիւնքում ԽՍՀՄ արտագաղթի արգելքների մեղմացման հետեւանքով, ձեւաւորուեց բնակչութեան (առաւելապէս նախկին հայրենադարձների միջավայրից), ոչ-մեծ եւ նոյնպէս դէպի արեւմուտք ուղղուած միջպետական արտահոսք:

Այսպիսով, 80ականներին դէպի Հայաստան ներհոսքին փոխարինելու եկաւ արտահոսքը: Ըստ պաշտօնական վիճակագրական տուեալների դրա միջին տարեկան մեծութիւնը կազմում էր 8-10,000 մարդ[6]:

Բնակչութեան ընդհանուր թուի միայն մօտ 0,3%ին եւ բնական աճի 15-17%ին հաւասարազօր այս խմբաքանակը, թերեւս թէ՛ ժողովրդագրական եւ թէ՛ ընկերատնտեսական առումով էական բացասական անդրադարձ չէր ունենում: Այդուհանդերձ, այս արմատական անցումը մեծապէս մտահոգել էր ՀԽՍՀ ղեկավարութեանը: Վերջինիս յանձնարարութեամբ 1982-84՝ երեւոյթի պատճառների ի յայտ բերմանը եւ հետեւանքների գնահատմանն ուղղուած յատուկ հետազօտութիւն[7] կատարուեց:

Այդ հետազօտութեան առաւել կարեւոր արդիւնքներից մէկն եղաւ այն, որ փաստացի տուեալների հիման վրայ ապացուցուեց, որ 80ականներին բնակչութեան արտահոսքի վերեւում ներկայացուած ծաւալներն իրականում շուրջ կիսով չափ պակաս էին, որովհետեւ դրա երկրորդ կէսը կազմող հատուածի տուեալները չէին գոյանում ԽՍՀՄում գործող գաղթի հաշուառման համակարգի եւ միջհանրապետական գաղթի արդիւնքների ճշտման մեթոդաբանութեան անկատարութեան հետեւանքով:

Արտագնաների որոշ մասը, ձգտելով խուսափել քաղաքացիների գրանցման ԽՍՀՄում գործող համակարգի գործունէութեամբ պայմանաւորուած յետագայ քաշքշուկներից, պաշտօնապէս ընդունուած կարգով գրանցում էր միայն մուտքի վայր ժամանումը (առանց դրա հնարաւոր չէր աշխատելը): Մեկնման ու յետագայ վերադարձի քայլերի մի մասի չգրանցումը, բերում էր նրան, որ ճշտելով միջհանրապետական գաղթի տարեկան արդիւնքները (գործող մեթոդաբանութեամբ դա արւում էր ըստ ժամանածների թուի՝ որը գնահատւում էր որպէս մեկնածների թուի համեմատ առաւել հաւաստի փաստ), ԽՍՀՄ Կենտրոնական Վիճակագրական

Վարչութիւնը ելքի վայրից՝ այս պարագայում Հայաստանից մեկնածների թիւը մեքենականօրէն աւելացնում էր համապատասխան մեծութեամբ:

ԵՂԱՆԱԿԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀՈՍՔ

Գարուն-աշուն միջակայքով կատարուող եւ որպէս կանոն Ռուսաստանի եւ Ղազախստանի գիւղական վայրեր ուղղուած այս աշխատանքային գաղթականական հոսքը, ձեւաւորուելով 1960ականներին, արագօրէն վերաճել էր կայուն, բաւական զանգուածային երեւոյթի:

Ըստ վերոյիշեալ հետազօտութեան տուեալների 70--80ականների ողջ ընթացքում, հանրութեան կողմից 'խոպանչիութիւն' անուանումը ստացած այդ գործընթացը շարունակաբար ընդգրկում էր ՀԽՍՀ բնակչութեան շուրջ 1%ը եւ աշխատուժի գրեթէ 2%ը՝ տարեկան 30-40,000 մարդ:

Որպէս այս՝ նոր երեւոյթի հետեւանք, հայկական իրականութիւնում ի յայտ եկան եւ մինչ օրս էլ շարունակում են տեղ գտնել այնպիսի հասկացութիւններ, ինչպիսիք են՝ ժամանակաւոր աշխատանքային գաղթ կամ արտագնացութիւն, ժամանակաւոր աշխատանքային գաղթող կամ արտագնայ, արտերկրում գտնուող գաղթական (ԱԳԳ՝ որոշակի ժամանակում արտերկիր մեկնած ու չվերադարձած մշտական եւ ժամանակաւոր արտագաղթող), եւ վերադարձած գաղթական (ՎԳ՝ վերադարձած ԱԳԳ):

Արտագնաների մեծ մասը Գեղարքունիքի, Լոռու եւ Շիրակի տարածքների, ընկերատնտեսական եւ բնակլիմայական իրողութիւնների բերումով աշխատուժի աւելցուկ ունեցող բնակավայրերի բնակիչներն էին: Գրեթէ բացառապէս առոյգ տարիքի տղամարդկանցից կազմուած այս աշխատանքային խումբը, հիմնականում զբաղուելով պայմանագրային հիմունքներով կատարուող շինարարական աշխատանքներով, լուրջ նպաստ էր ունենում այդ վայրերի զարգացման գործում:

Նոյն վերոյիշեալ հետազօտութեան գնահատմամբ, արտագնաների կողմից մուտքի վայրերում իրականացուող ներդրումների տարեկան համախառն ծաւալը կազմում էր 1-1,5 մլրդ. ռուբլի՝ այն տարիների պաշտօնական հաշուեչափով՝ մօտ 2 մլրդ. ԱՄՆ դոլար:

Սակայն մուտքի վայրերում երեւոյթն ուղեկցւում էր նաեւ որոշակի հիմնահարցերով. տեղացիների հետ յարաբերութիւնները միշտ հարթ չէին, յաճախ լինում էին բաւական լուրջ խնդիրներ՝ կաշառարութիւն եւն.:

Միանշանակ չէին նաեւ երեւոյթի հետեւանքները Հայաստանի համար: Դրանք անվերապահօրէն դրական էին արդիւնաւէտ զբաղուածութեան, դրամական միջոցների նշանակալից ներհոսքի (տարեկան մօտ 150 մլն. ռուբլի կամ գրեթէ 200 մլն. ԱՄՆ դոլար), ապահովման տեսանկիւնից: Խորհրդային տնտեսական դրուածքում ձեռնարկատիրական ներդրումների հնարաւորութեան բացակայութեան պայմաններում, արտագնաների վաստակն ամբողջովին ուղղուելով ընտանիքների ընթացիկ ու հեռանկարային կարիքներին (կացարանային ու կենցաղային պայմանների բարե-

լաւում, առողջական ու կրթական խնդիրների լուծում, աւտօմեքենաների, գոյքի ձեռք բերում եւն.), մարդկային զարգացման բոլոր առումներով նպաստում էին կեանքի որակի բարձրացմանը: Ուստի, սկզբնաւորուելով որպէս զբաղուածութեան սահմանափակ հնարաւորութիւններով պարտադրուած գոյատեւման ռազմավարութիւն, երեւոյթը ժամանակի ընթացքում ձեռք էր բերել բարգաւաճման ռազմավարութեան յատկանիշներ:

Երեւոյթի բացասական հետեւանքներից էին.- աշխատանքային բարձր բեռնուածութեան բերումով արտագնաների կենսուժերի գերածախսը, ընտանիքի հայրերի (որպիսիք էին արտագնաների մեծ մասը), տեւական բացակայութեան, ամուսնական զոյգի տարեկան միայն 3-4 ամիս համատեղուելու բերումով՝ զաւակների դաստիարակութեան, ընտանիքի կայունութեան խնդիրների սրումը, վարակիչ հիւանդութիւնների (այդ թւում սեռական) տարածումը եւն.:

Որպէս հետեւանքների առաւել նշանակալից բացասական յատկանիշ, պէտք է առանձնացնել երեւոյթի արտահոսքածին ներուժը: Արտագնացութիւնը, ըստ էութեան հանդիսանում էր միջհանրապետական գաղթի կանխորոշող գործոններից մէկը: Բանն այն է, որ շարունակաբար աւելանում էր այն արտագնաների թիւը, որոնք բազմակի մեկնում/վերադարձների փոխարէն նախընտրում էին աշխատանքի վայրեր տեղափոխուել մշտական բնակութեամբ (յաճախ՝ ընտանիքով):

ԱՐՏԱԳԱՂԹԸ՝ ԽՈՐՀՐԴԱՅԻՆԻՑ ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆ՝ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ (1988–2001)

Դեռեւս խորհրդային ժամանակի վերջին տարիներին տեղի ունեցաւ ՀԽՍՀ նախորդ շրջանի ներկայացուած գաղթի իրավիճակի բեկում: Սկզբնաւորուելով 1988ին, այն պայմանաւորուեց այնպիսի արտակարգ գործոններով, ինչպէս՝ ղարաբաղեան հակամարտութիւնը, կործանարար երկրաշարժը, քաղաքական, ընկերատնտեսական յեղափոխական անցումները (ԽՍՀՄ փլուզում, շրջափակում, բնակչութեան բացարձակ մեծամասնութեան զանգուածային ունեզրկմամբ ուղեկցուած ցնցումային անցում շուկայական յարաբերութիւններին, արտադրութեան անկում եւն.):

Ընդ որում, մի շարք պատճառներով, գաղթի պաշտօնական վիճակագրութիւնը դադարեց արտացոլել իրականութիւնը: Իրականութիւն չարտացոլելու երեւոյթներից հիմնականը հանդիսացաւ գաղթականական քայլերի 'յստակութեան' կորուստը: Հանգամանքների ճնշման տակ, գաղթումների մեծ մասը ուղղուած չլինելով որոշակի վերջնական նպատակի, ձեռք բերեց անբարենպաստ իրողութիւններին իւրօրինակ 'արագ արձագանգի' բնոյթ: Սրա բերումով, արտագաղթողների գերակշիռ մասը վերադարձի դէպքում հնարաւորինս քիչ խնդիրներ ունենալու մտայնութեամբ, խուսափել է (եւ մինչ օրս էլ այս կամ այն մասով շարունակում է խուսափել) պաշ-

տօնապէս հաստատուած կարգով մեկնման եւ ժամանման գաղթականական քայլերը գրանցելուց[8]:

Գաղթի վերաբերեալ առաւել հաւաստի տուեալներ սկսեցին, եւ մինչ օրս շարունակում են, տրամադրել միայն մարդահամարներն ու յատուկ նպատակային հետազօտութիւնները:

Նմատակային հետազօտութիւններից առաջինն իրականացուեց դեռեւս 1995ին[9]: Դրանով ստացուեցին նորանկախ Հայաստանի արտագաղթի ծաւալային եւ որակական բնութագրիչների առաջին իրատեսական գնահատականները՝ նախեւառաջ այն, որ 2001--05՝ գաղթի պատճառով երկիրը կորցրել էր իր բնակչութեան աւելի քան 17%ին: Իդէպ, ՀՀ 2001ի մարդահամարի արդիւնքները լիովին հաստատեցին այս հետազօտութեան տուեալների հաւաստիութիւնը[10]:

Անցումային շրջանում ՀՀ գաղթի իրավիճակի - ըստ քանակական ու որակական յատկանիշների - ստորեւ ներկայացուած 3 փուլերի տարբերակումն իրականացուած է վերոյիշեալ աղբիւրների տուեալների (հարկ եղած դէպքերում նաեւ դրանց համեմատական վերլուծման արդիւնքում կատարուած փորձագիտական գնահատումների) հիման վրայ:

ԱՊԱԿԱՅՈՒՆԱՑՄԱՆ ՓՈՒԼ (1988--1991)

Այս փուլում վճռորոշ են քաղաքական-հասարակական եւ բնական արտակարգ գործօնները (ամբողջատիրութեան անկում, ԽՍՀՄ փլուզում, ազգամիջեան հակամարտութիւններ եւ անվստահութիւն, միջխաւային լարուածութիւն, աղէտալի երկրաշարժ եւն.):

Փուլի հիմնական հոսքերն էին.-

1.- Փախստականներ (1988--1991).- Սկիզբ առնելով 1988ին, այն իր շրջանակներում ներառեց շուրջ 590,000 մարդ, այդ թւում՝

- **ներհոսք**՝ մօտ 420,000 մարդ (360,000 Ադրբեջանից, միւսները՝ ԽՍՀՄից, ազգամիջեան հակամարտութիւնների այլ օճախներից՝ Աբխազիա, Օսեթիա, Միջին Ասիա).
- **արտահոսք**՝ մօտ 170,000 հայաստանաբնակ ադրբեջանցիներ.
- Արձանագրենք, որ սա եղել եւ մնում է անցման շրջանի միակ հոսքը, որի արդիւնքում Հայաստանը ունեցաւ բնակչութեան թուաքանակի աւելացում՝ մօտ 250,000 մարդով, կամ գրեթէ 7%ով: Չի կարելի չնշել սակայն, որ 90ականների ծանր իրողութիւնների ճնշման տակ, վերջիններիս զգալի մասը (առաւելապէս տարիքային եւ այլ առումներով առոյգ անձեր), այնուհետ արտագաղթեց մեծմասամբ՝ Ռուսաստան, փոքր մասով՝ արեւմտեան երկրներ[11]:

Վերոյիշեալ փախստականների ներհոսքը, ձեւական առումներով չտեղաւորուելով ԽՍՀՄում ընդունուած գաղթ հասկացութեան շրջանակներում, ներառուեց ՀՀ բնակչութեան կազմում միայն 2001ի մարդահամարի կողմից, այսինքն սոսկ այն փոքր մասով, որը դեռեւս բնակւում էր երկ-

ռում:

2.- Երկրաշարժի գօտու բնակչութեան տարահանում եւ վերադարձ (1988–1990).- Սա կարեւորւում է ոչ-այնքան արդիւնքով՝ տարհանուած մօտ 200,000 աղէտեալներից (հիմնականում կանայք ու երեխաներ), շուրջ 50,000ի չվերադառնալով, որքան նրանով, որ վերջիններս կանխորոշելով իրենց ընտանիքների եւ այլ մերձաւորների յետագայ արտագաղթը, դրանով իսկ պատճառ հանդիսացան 1992–94ի բնակչութեան արտահոսքի զանգուածային երեւոյթի վերաճմանը[12]:

3.- Վերականգնողական աշխատանքների մասնակիցների ժամանում եւ մեկնում (1989–1991).- Այս՝ պետականօրէն կազմակերպուած աշխատանքային հոսքը, սկզբնաւորուելով որպէս աղէտի հետեւանքների վերացման աշխատանքների համապետական ծրագրի բաղադրամաս, ԽՍՀՄ փլուզումից յետոյ արագօրէն դադարեց եւ ժամանածները լիովին լքեցին Հայաստանը:

4.- Հասարակական-քաղաքական արտագաղթ (1988–1990).- Հիմնականում մշտական բնակութեան միտող, առաւելապէս ընտանեկան այս հոսքը (մեկնում՝ գրեթէ 250,000, ժամանում/վերադարձ՝ մօտ 30,000, բացասական մնացորդ՝ շուրջ 220,000 մարդ), ներառել է՝

- նախընթաց տարիներին արեւմուտք արտագաղթել ձգտող մերժուածներին.
- աշխատելու եւ/կամ ձեռներէցութեամբ զբաղուելու համար արտագաղթող բարձր որակաւորում ունեցող մասնագէտներին ու նորայայտ գործարարներին.
- խորհրդային վարչակազմի հասարակականօրէն անյարմարաւէտ իրավիճակում յայտնուած ներկայացուցիչներին.
- ռուսալեզու խաւին (թէ՛ ազգային փոքրամասնութիւնները ներկայացնող եւ թէ՛ հայազգի, նաեւ՝ փախստականների թուից)[13]:

Այսպիսով, այս փուլում մեկնածները գերազանցել են եկածներին ընդհանուր առմամբ միայն մօտ 20,000ով:

Յաւելենք, որ փուլի կարեւոր յատկանիշներից մէկն էլ եղաւ արտագնացութեան գրեթէ դադարումը: Այն պայմանաւորուած էր նրանով, որ արտագնաները գործնականում ողջ կազմով իբրեւ կամաւոր լծուել էին աղէտի գօտու վերականգնման գործին:

ԽՍՀՄ փլուզումը, սակայն, բերելով այդ աշխատանքների սառեցմանը, ըստ էութեան պարտադրեց, որ արդէն 1992ից արտագնացութիւնը վերսկսի՝ ընդ որում որակապէս փոխուած կերպով եւ քանակապէս ընդլայնուած սահմանանիշներով:

ԶԱՆԳՈՒԱԾԱՅԻՆ ԱՐՏԱՀՈՍՔԻ ՓՈՒԼ (1992–1994)

Այս փուլի համար վճռորոշ դարձան բոլոր քաղաքացիների վրայ անմիջաբար ազդող արտակարգ երեւոյթները՝ տնտեսութեան ու փոխադրամի-

ջոցների եւ համայնքային-կենցաղային համակարգերի կաթուածահարում, զանգուածային գործազրկութիւն, հանրային ցնցումաբուժում ու դրանով պայմանաւորուած զանգուածային ունեզրկում եւն.:

Դրանց ազդեցութեան տակ թռիչքաձեւ աճեցին արտահոսքի ծաւալները: Ընդամէնը 3 տարում գրանցուեց աւելի քան 980,000 արտագաղթ եւ միայն մօտ 370,000 ներգաղթ՝ հիմնականում վերադարձներ: Այսինքն շուրջ 610,000 մարդ, կամ երկրի ամէն 5 բնակչից գրեթէ 1ը մեկնեց ու չվերադարձաւ[14]:

Այս փուլը բեկումնային հանդիսացաւ նաեւ այն իմաստով, որ իրանից սկսուած ու մինչ այժմ Հայաստանի ներհոսքի ճնշող մեծամասնութիւնը (95%ը եւ աւելին) սկսեցին կազմել վերստին-արտագաղթողները՝ այսինքն մինչ այդ տարբեր նպատակներով (հիմնականում աշխատանքային եւ ընտանեկան, փոքր մասերով՝ մշտական բնակութեան, կրթական եւն.) երկրից արտագաղթածները (աւելի ուշ շրջանում՝ ոչ-մեծաթիւ դէպքերում, արտերկրում ծնուած իրենց սերունդի հետ):

Հաշուի առնելով սա, ինչպէս նաեւ այն, որ տուեալ օրինաչափութիւնից երկու ոչ-մեծ շեղումները (իրաքահայ՝ 2002--05, եւ սիրիահայ՝ 2012--15 փախստականների ներհոսքները)[15], այստեղ եւ յետագայ շարադրանքում ներգաղթող եզրի փոխարէն կիրառուած է ՎԱ եզրը:

Այս փուլում թէ՛ արտագաղթողների, թէ՛ ՎԱերի զանգուածները ձեւաւորուած էին երկու հիմնական՝ աշխատանքային եւ 'ընկերակենցաղային[16]' հոսքից:

Եթէ մեկնածների թւում գերակշռել են առաջինները (աշխատանքայինը), ապա վերադարձածների մօտ երկրորդները (ընկերակենցաղայինը) (մօտ 60%, առաջինների մօտ 35%ի դիմաց)[17]:

Այս փուլում, արտերկրում մնացածների գրեթէ 4/5ը հանգրուանել էր ԱՊՀ երկրներում՝ գերազանցապէս ՌԴում, միւսները՝ մօտաւորապէս հաւասար մասնաբաժիններով, եւրոպական երկրներում եւ ԱՄՆում[18]:

Ի տարբերութիւն նախորդ փուլի՝ որի հոսքերի մեծ մասին, որպէս կանոն բնորոշ էր բաւական համամասնական ժողովրդագրական կառուցուածք, այս փուլի պատկերում, աշխատանքային գաղթողների գերակշռման բերումով, անհամամասնօրէն բարձր էին տղամարդկանց եւ առոյգ վերարտադրական եւ աշխատանքային տարիքի անձանց թուերը:

Նշենք, որ այս տուեալի բերումով Հայաստանի բնակչութեան ըստ սեռի եւ տարիքի բաշխման համամասնութիւնների խաթարումը զգալի չափով կանխորոշեց մինչ այդ բարենպաստ ժողովրդագրական վիճակի շեշտակի բեկումը՝ ամուսնութեան եւ ծնելիութեան մակարդակների արագընթաց նուազում, մահացութեան մակարդակի որոշ աճ, ծերացման գործընթացի նշանակալից խորացում եւն.:

Այս փուլը տարբերակւում էր նաեւ գաղթողների միջինից բարձր կրթամակարդակ ունենալով[19], ինչը գնահատւում էր, որպէս ուղեղների ար-

տահոսքի բնոյթի վկայութիւն: Յաւելենք, որ այս փուլի գաղթողների թւում անհամամասնօրէն աւելի մեծ էին նաեւ մասնաւոր հատուածի զբաղուածների, գործազուրկների եւ նիւթական միջին եկամուտ ունեցողների բաժինները: Վերջիններիս դէպքում նիւթականը հանդէս էր գալիս միաժամանակ թէ՛ որպէս շարժունակութեան գործօն եւ թէ՝ հետեւանք/արդիւնք: Արտագաղթի նիւթական շարժառիթի եւ հնարաւորութեան բացակայութիւնն էլ կանխորոշել էր յաջորդաբար՝ առաւել բարձր եւ ցածր ապահովուածների նուազ գաղթի աշխուժութիւնը:

ԱՐՏԱԿԱՐԳ ԳՈՐԾՕՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹԵԱՆ ՄԱՐՄԱՆ ՓՈՒԼԸ (1995–2001)

Այս փուլն առանձնանում է գաղթի աշխուժութեան նուազմամբ. մեկնումներ՝ մօտ 600,000, ժամանումներ (հիմնականում վերադարձներ)՝ շուրջ 350,000, բացասական մնացորդ՝ 250,000 մարդ (տարեկան միջին հաշուով գրեթէ 36,000 մարդ), կամ բնակչութեան մօտ 8%ը[20]:

Կասկածից վեր է, որ այս անցումը պայմանաւորուած էր երկրի ընկերատնտեսական վիճակի կայունացմամբ՝ արտակարգ գործօնների ազդեցութեան թուլացմամբ:

Միւս կողմից սակայն, դրանում դեր էին ունեցել նաեւ՝ հենց նախընթաց գերբարձր արտագաղթի աշխուժութիւնը, ինչպէս նաեւ 'արտաքին գործօնը'՝ ընդունող երկրների հակազդեցութիւնը (գաղթի << գլխաւոր գործընկերոջ՝ ՌԴ գաղթի օրէնսդրութեան խստացումները):

Երկրի ընկերատնտեսական վիճակի կայունացումը արտագաղթի ներուժի նուազման էր բերել պայմանաւորելով մի կողմից երկրում մնացողների կազմում աշխուժ, նախաձեռնող մարդկանց թիւի նուազումը, միւս կողմից՝ գաղթողների դրամական փոխանցումների շնորհիւ, բնակչութեան զգալի մասի կենսամակարդակի աճը:

Այս փուլի առաւել կարեւոր կառուցուածքային յայտանիշը թէ՛ մեկնողների եւ թէ՛ վերադարձողների մօտ աշխատանքային գաղթողների բաժնի աճն էր՝ մինչեւ ամբողջ հոսքի շուրջ 2/3ով:

Արտաքին գաղթի գործընթացների աշխատանքային բաղադրամասի վերաճումը հիմնականի, պարտադրում է դրանում կատարուած տեղաշարժերի աւելի մանրամասն ներկայացում:

Արտագնացութեան վերադարձը հայկական իրականութիւն նշանաւորուեց նրանով որ.- ա)՝ այն դադարեց լինել բացառապէս եղանակային գործընթաց, բ)՝ ընդգրկեց նաեւ այն տարածքների բնակչութեանը, որոնցից մինչ այդ գրեթէ չկային արտագնաներ, ընդլայնեց ծաւալները:

Արդէն զանգուածային արտահոսքի տարիներից եւ մինչ օրս, ի յաւելումն եղանակային արտագնացութեան, որպէս << աշխատանքային գաղթի համալիր երեւոյթի կարեւոր բաղադրամասեր սկսեցին հանդէս գալ ոչեղանակային կարճաժամկէտ (մինչեւ 1 տարով) արտագնացութիւնը եւ

տեւական (աւելի քան 1 տարով) արտագնացութիւնը: Եթէ սրանցից առաջինը թէ՛ հիմնական յատկանիշներով եւ թէ՛ հետեւանքների առումով տարբերւում էր/է եղանակայինից երեւի թէ միայն աշխատանքների ոչ-եղանակային լինելով, ապա երկրորդն արդէն իսկ այն սկզբունքային հանգամանքով, որ ի յայտ գալու պահից մինչ օրս գրեթէ անփոփոխ ընթանում է բացասական մնացորդով, այսինքն մեկնարկելով որպէս ժամանակաւոր գաղթ, իրականում դէպքերի զգալի մասում վերաճում է մշտականի: Աւելին. խթանելով կիսուած ընտանիքների արտերկրում միաւորման գործընթացը, այն հանդէս է գալիս որպէս արտահոսքածին լուրջ գործօն:

Յետխորհրդային արտագնացութեան է՛լ աւելի կարեւոր տարբերութիւնն այն է, որ կորցնելով բարգաւաճման ռազմավարութեան բնոյթը, այն վերածուել է ընդամէնը գոյատեւման ապահովման՝ որպէս կանոն այլընտրանքից զուրկ, ռազմավարութեան: Սրանով են պայմանաւորուած երեւոյթի այնպիսի յատկանիշները, ինչպիսիք են անյստակութիւնը (եղանակայինից՝ ոչ-եղանակայինի, կարճատեւից՝ տեւականի վերափոխուելու բարձր ներուժը, վաստակի մեծութիւնը, աշխատանքի, կացարանային եւ կենցաղային պայմանները եւն.), ընդունելիութեան ցածր նշաձողերը, բազմաճիւղայնութիւնը (ոչ միայն շինարարութիւն, այլեւ առեւտուր, հասարակական սնունդ, արտադրութիւն, սպասարկում եւն.), վերջապէս եւ յատկապէս բարձր վտանգայնութիւնը:

Մեծապէս վտանգային էր - եւ է - ուղեւորութիւնը: Այն հիմնականում կատարւում էր/է պարտքով եւ/կամ գոյքի/անասունների վաճառքի գումարներով, այսինքն առանց յաջողութեան երաշխիքի վտանգւում էր/է ընտանիքի վաղուայ օրը:

Է՛լ աւելի վտանգային էր/է բուն աշխատանքը: Առաւելապէս իրականացուելով բանաւոր համաձայնութեամբ, այն ոչ-քիչ դէպքերում ուղեկցւում էր/է վճարումների ուշացմամբ, անգամ մասնակի կամ բոլորովին չվճարմամբ:

Վտանգայնութեան լուրջ գործօններ էին/են մուտքի վայրում իրաւական խնդիրներ ունենալը եւ տեղական հանրութեան որոշակի մասի անբարեացակամ/թշնամական դիրքորոշումը:

Կարեւոր եւ յատկանշական է նաեւ նախորդ փուլի 'ընկերակենցաղային' հոսքի դադարը եւ ընտանիքների վերամիաւորման (հիմնականում արտերկրում) հոսքի ի յայտ գալը: Այսինքն առաւելապէս վերադարձով աւարտուող հոսքի փոխարինումը՝ անվերադարձով:

Եթէ սրանցից առաջինն իրավիճակի բարելաւման արդիւնք էր, ապա երկրորդը՝ բարելաւման արագութեան բաւարար չլինելու, Հայաստանում ձեւաւորուած անառողջ բարոյահոգեբանական մթնոլորտի, վիճակի արագ բարելաւման յոյսի խաթարման հետեւանք էր:

Արտագնաների քանակի աճի բերումով, հոսքերի ընկերաժողովրդագրական եւ աշխարհագրական բաշխումների առանձնայատկութիւններն

աւելի՛ էին ընդգծուել, անաւանդ՝ տղամարդկանց եւ աշխուժ վերարտադրական եւ աշխատանքային տարիքային խմբերի, ինչպէս նաեւ ՌԴ մեկնողների բաժինները:

Ուշագրաւ է, որ այս փուլի առաւել նշանակալից կառուցուածքային տեղաշարժը՝ նոր մեկնողների աւելի ցածր կրթամակարդակ ունենալը, նշանակում էր որ արտագնաների կազմում սկսել էին գերակշռել բարձր որակատրում չպահանջող աշխատանքներ կատարող եղանակային գաղթականները[21]:

Այսպիսով, անցման շրջանը կազմող երեք փուլերի ընթացքում Հայաստանի բնակչութեան մօտ 30%ը՝ աւելի քան 1 մլն. մարդ, մեկնել է եւ չի վերադարձել:

Յանուն ճշմարտութեան հարկ է նշել, որ այս փաստը, որոշակի իմաստով հանդիսացել է ընդհանուր առմամբ երկրի անմխիթար վիճակի շտկման գործոններից մէկը: Ապահովելով զգալի դրամական միջոցների շարունակական ներհոսք, այն նպաստել է բնակչութեան վճարունակութեան բարձրացմանը, ինչը կարեւոր դեր է խաղացել համայնքային-կենցաղային եւ տնտեսական ճգնաժամի յաղթահարման գործում: Անվիճելի է նաեւ սրա դրական դերը ընկերային լարուածութեան անկառավարելի մակարդակի բարձրացման, լուրջ ընկերային ցնցումների վտանգի կանխարգելման առումով:

Միւս կողմից սակայն, զանգուածային արտահոսքի հետեւանքով հանրութեան առոյգ տարրի զգալի մասի երկրի ներքին խնդիրներից օտարումը, անկասկած եղել է ՀՀ արդի քաղաքական, ընկերային եւ տնտեսական համակարգերին բնորոշ բացասական երեւոյթների (անազատ, անարդար ընտրութիւններ, կաշառք-փտածութիւն եւ հովանաւորչութիւն, անառողջ տնտեսական միջավայր եւ խիստ խորացած մենաշնորհացում եւն.) արմատաւորման պատճառներից մէկը:

ՅԵՏԱՆՅՈՒՄԱՅԻՆ ԳԱՂԹԸ. ՈՐԱԿԱԿԱՆ ՅԱՏԿԱՆԻՇՆԵՐ ԵՒ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ (2002–ՄԻՆՉ ՕՐՍ)

Երկրի քաղաքական, ընկերատնտեսական ու հասարակական վիճակի համեմատական կայունացումը, չէր կարող չանրադառնալ նաեւ արտագաղթի վրայ:

Տեղի ունեցած փոփոխութիւնների կարեւորագոյն դրսեւորումն է գաղթի որակական յատկանիշների կայունացումը եւ յետագայ ամրագրումը՝ ընդհուպ մինչեւ ներկայ փուլը:

Ինչ վերաբերում է քանակական բնութագրիչներին, ապա որոշակի հիմքեր կան արձանագրելու, որ դրանց բնորոշ է բաւական բարձր ուժականութիւնը:

Առաջ անցնելով նշենք, որ, եթէ որակական յատկանիշների անփոփոխութիւնը պայմանաւորուած է առաւելապէս ներքին գործոններով՝ նախեւառաջ երկրի տնտեսական, ընկերային եւ քաղաքական իրողութիւններում լուրջ դրական տեղաշարժերի, բարեփոխումների բացակայութեամբ, ապա քանակական անցումները, գրեթէ լիովին արտաքին գործոնների հետեւանք են:

Յետանցումային Գաղթի Որակական Յատկանիշները.-

Առկայ նիւթերի համեմատական վերլուծումը բաւարար հիմք է հանդիսանում որպէս յետանցումային ողջ շրջանում Հայաստանի գաղթի հիմնական՝ գործնականում անփոփոխ որակական հետեւեալ յատկանիշները առանձնացնելու.-

- Երեւոյթի զանգուածայնութիւնը.
- Շարունակաբար բնակչութեան զգալի մասի արտահոսքով ընթանալը.
- Հիմնականում երեք՝ ա) ժամանակաւոր աշխատանքային (մեկնում/վերադարձներ), բ) ընտանեկան (առաւելապէս նոյնպէս մեկնում/վերադարձներ) եւ գ) մշտական (գրեթէ միայն մեկնումներ)ը շրջանառութեան ծաւալներով մեծապէս տարբեր, բայց բացասական մնացորդի արդիւնքներով նոյնական, հոսքերից կազմուած լինելը.
- Աշխատանքային հոսքերի, իրենց հերթին երկու (տեւականութեամբ եւ ծաւալներով մեծապէս տարբեր, բայց արդիւնքների մեծութիւններով մօտաւորապէս համազօր) մասերից կազմուած լինելը. Աշխատանքային մեկնումների եւ վերադարձների գերակշիռ մասերը կազմող կա՛մ կարճաժամկէտ՝ հիմնականում եղանակային հոսք, կա՛մ՝ տեւական հոսք լինելը.
- Թէ՛ մեկնողների եւ թէ՛ վերադարձող/ժամանողների հոսքերում տղամարդկանց եւ աշխուժ վերարտադրական ու աշխատանքային տարիքի անձանց անհամամասնօրէն բարձր թիւը.
- Աշխատանքային/տնտեսական գործոնների արտագաղթի գերակշիռ պատճառ հանդիսանալը.
- Բոլոր բնոյթի գաղթի (մեկնումների եւ վերադարձ/ժամանումների) գերակշիռ մասերի ՌԴը բաժին ընկնելը.
- Այս կամ այն չափով աղքատութեան մակարդակի աճի զսպման, երկրի տնտեսական, նաեւ ընկերային ու քաղաքական համակարգերի կայունացման գործօն լինելը:

Յետանցումային Գաղթի Քանակական Բնութագրիչները.-

Յետանցումային գաղթի հիմնական որակական յատկանիշների անփոփոխութիւնը թոյլ է տալիս, որ սահմանափակուելով 2002--11[22] գաղթի քանակական բնութագրիչներից կարեւորագոյնի՝ գաղթի արտահոսքի ծաւալների նուազման փաստի մատնանշմամբ, միանգամից անցնենք

վերջին տարիների գաղթի գործընթացների անտարակոյս աւելի հրատապ ծաւալային եւ կառուցուածքային ցուցանիշների ներկայացմանը:

Պէտք է ասել, որ եթէ չլինէր արտագաղթը, ՀՀ մշտական բնակչութիւնը 2011ի մարդահամարի պահին, աւելանալով միջմարդահամարային 2002–11ի բնակչութեան փաստացի բնական յաւելաճի չափով՝ 110,600 մարդ, պէտք է կազմէր 3,323,600 մարդ (տուեալ բնական աճը+մշտական բնակչութեան թիւն ըստ 2001ի մարդահամարի՝ 3,213,000 մարդ)[23]:

Այն որ, իրականում ըստ 2011ի մարդահամարի, ՀՀ մշտական բնակչութեան թուաքանակը կազմելով 3,018,900 մարդ, 304,700 կամ աւելի քան 9%ով պակաս էր, անկասկած նշանակում է, որ բնակչութեան հենց այդ մասն է, որ 2002–11ին գաղթել է ու չի վերադարձել:

Հետեւաբար, 2002–11ի արտահոսքի միջին տարեկան մեծութիւնը կազմելով 30,400 մարդ, աւելի քան 15%ով զիջել է 1995–2001ի տուեալներին (36,000ից 34,500):

Սկսելով երեւոյթի զանգուածայնութեան ցուցանիշներից, արձանագրենք, որ ըստ ՀՀ գաղթի գործընթացների վերջին՝ 2017ի, նպատակային հետազօտութեան տուեալներին[24], որոշակի աճի արդիւնքում դրանց մակարդակները հանգրուանել են բաւական բարձր նշաձողերի վրայ:

Այսպէս, հետազօտութեան ԴՅԺում (2014–17), գաղթած/հանդիսացող անդամով ընտանիքների բաժինը կազմելով 35,1%, գրեթէ 1,5 կէտով գերազանցել է 2015ի նման հետազօտութեան նոյն մեծութեանը: Նշենք, որ իրենց անդամների թւում այս ընտանիքների 14,2%ն ունէր միայն ՎԳ անդամ/ներ, 19,1%ը՝ միայն ԱԳԳ անդամ/ներ, մնացած 1,8%ը՝ թէ՛ ՎԳ եւ թէ՛ ԱԳԳ անդամներ: Այսինքն, ՀՀ աւելի քան ամէն 5րդ ընտանիքի առնուազն մէկ անդամն ԱԳԳ էր: Յաւելենք, որ գաղթածներ ունեցող ընտանիքների 25%ից աւելին ունէր 2 եւ աւելի գաղթածներ[25]:

Զանգուածայնութեան միւս ցուցանիշը՝ բնակչութեան ներառուածութիւնը, կամ ԴՅԺում գաղթի ուղեւորութիւն կատարածների բաժինն է: Կազմելով գրեթէ 13%, այն գերազանցել է նախորդ տարիների նոյն թուերին (2015՝ 12,2%, 2016՝ 11,3%): Երեւանաբնակների ցուցանիշի կայունացման պայմաններում կատարուած այս տեղաշարժը, աւելացել է բացառապէս մարզային գաղթողների (հիմնականում աշխատանքային) թուի եւ բաժնի աճով[26]:

Նշենք, որ գաղթի զանգուածայնութեան մակարդակի այսօրինակ փոփոխումն ընդհանուր առմամբ պէտք է գնահատուի որպէս անհանգստացնող՝ ոչ միայն ինքնին, այլեւ նախեւառաջ այն պատճառով, որ ուղեկցուելով ՎԳների թուի նուազմամբ, բացառապէս պայմանաւորուած է ԱԳԳների՝ այսինքն մասամբ արդէն մշտապէս արտագաղթածների եւ այս կամ այն մասով էլ չվերադառնալու հաւանականութիւն ունեցող ժամանակաւոր արտագաղթածների թուի աճով:

Յաւելենք նաեւ, որ ներքին գործօնները՝ երկրի ընկերատնտեսական վիճակում էական դրական տեղաշարժերի բացակայութիւնը եւն., ընդամէնը որոշ չափով պատճառ են հանդիսացել տուեալ՝ հիմնականում արտաքին գործօններով պայմանաւորուած անցումներին:

Վերջիններից գլխաւորը, ամենայն հաւանականութեամբ, հանդիսացել է ԵԱՏՄ անդամ երկրում, ԵԱՏՄ անդամ այլ երկրների քաղաքացիների բնակուելու եւ աշխատանք ունենալու նոր պայմանների գործարկումը ու դրանով պայմանաւորուած հայ գաղթողների՝ մուտքի հիմնական երկիր հանդիսացող ՌԴում, աշխատելու եւ բնակուելու/գտնուելու պայմանների որոշակի չափով բարելաւումը:

Որպէս զանգուածայնութեան ցուցանիշ կարող է ընկալուել նաեւ ԴՀԺում կատարուած գաղթի ուղեւորութիւնների համալիր թիւը: Վերջին տարիներին այն եւս աճել է, ընդ որում աւելի մեծ չափով, քան գաղթողների թիւը (աւելի քան 111%ով, կամ 2015՝ 1050,200ից, 1167,200ի): Այսինքն փաստօրէն տեղի է ունեցել գաղթի շարժունակութեան ցուցանիշի (ԴՀԺում ուղեւորութիւնների միջին թուի) մեծացում՝ 2012--2015ի 2,86ից, 2014--17ին գրեթէ 3,1ի [27]:

Այս բոլորի առաւել կարեւոր եւ միանշանակ բացասական հետեւանքն էլ որակական երկրորդ յատկանիշի՝ բացասական արտահոսքի, նուազման միտումի դադարն ու աճի միտումի ի յայտ գալն է:

Բացասական արտահոսքը 2002-11՝ միջին տարեկան 30,400 անձից, բարձրացել է 35,000 անձի՝ ըստ 2015ի հետազօտութեան եւ աւելի քան 44,000 անձի՝ ըստ 2017ի հետազօտութեան գնահատականների[28]:

Աշխատանքային հոսքերի բաժնեմասերը 2014--16ի գաղթի բացասական մնացորդում կազմել են.- եղանակայինը՝ 13,6%, կարճատեւ ոչ-եղանակայինը՝ 9,8%, տեւականը՝ 22,8%, ամբողջը՝ 46,2%: Նշենք, որ արտերկրում մնացած եղանակային եւ ոչ-եղանակային՝ կարճատեւ գաղթողներն ամենայն հաւանականութեամբ նրանք են, ովքեր արտագաղթած լինելու ընթացքում, այս կամ այն բերումով (ձեռնտու աշխատանքի առաջարկ, ամուսնութիւն, մշտական բնակութեան մնալու վճիռ եւն.), ըստ էութեան վերածուել են եթէ ոչ մշտական արտագաղթածների, ապա առնուազն տեւական արտագնաների: Ամէն դէպքում, կասկածի տեղիք չի տալիս, որ արտագնաների արտերկրում կուտակուելու գործընթացը շարունակւում է:

Սա իր հերթին հիմք է հանդիսանում եզրակացնելու, որ տուեալ համակցութեան մօտակայ տարիների գաղթի վարքագծի առանձնայատկութիւնները, գնալով աւելի ու աւելի մեծ չափով են պայմանաւորելու Հայաստանի գաղթի հեռանկարները:

Համալիր բացասական մնացորդի 12%ն ձեւաւորել են ընտանեկան, իսկ 1,7%ը՝ կրթական հոսքերը:

Նկատի առնելով որ յետխորհրդային ժամանակում Հայաստանից հարկադիր բնոյթի արտագաղթ չի եղել, 2014--16ին եւս այդ հոսքի գծով

եղել է միայն ոչ-մեծ ներհոսք՝ 3400 մարդ: Սրանք անկասկած գործնականում բացառապէս մեր սիրիահայ հայրենակիցներն են:

Այստեղ չի կարելի սակայն չնշել, որ եթէ յաջողուէր հարկ եղած ճշտութեամբ չափագրել սիրիահայերի ներհոսքը (ինչը հետազօտողների գնահատմամբ՝ որոշ առարկայական պատճառներով չի յաջողուել անել), այս թիւը պէտք է որ աւելի մեծ լինէր:

Ընդհանուր առմամբ, գերազանցապէս աշխատանքային եղանակային արտագնաները՝ թէ՛ մեկնումների եւ թէ՛ վերադարձ/ժամանումների կտրուածքով, շարունակել են մնալ գերակշիռ:

Աշխատանքային արտագնաներից է բաղկացած 2014–16ին տեղի ունեցած.

- *588,300 գաղթի մեկնումների 76,4%ը (եղանակայիններ՝ 52,9%, ոչ-եղանակային կարճատեւներ՝ 13,3%, տեւականներ՝ 10,2%).*
- *455,300 գաղթի վերադարձ/ժամանումների 85,2%ը (եղանակայիններ՝ 64,4%, ոչ-եղանակային կարճատեւներ՝ 14,3%, տեւականներ՝ 6,5%):*

Այս մեկնումների եւ վերադարձ/ժամանումների յաջորդաբար 11,7%ը եւ 11,6%ը եղել են ընտանեկան, 10,8%ը եւ սոսկ 1,5%ն էլ՝ մշտական գաղթողները:

Ըստ 2017ի հետազօտութեան տուեալների, նոյնիսկ գաղթի աշխարհագրութեան ընդլայնման պայմաններում (33 երկրների հետ, 2015ի՝ 22 երկրների դիմաց), ՌԴն շարունակում է մնալ Հայաստանի գաղթի գլխաւոր թիրախը:

Արդարեւ, դէպի ՌԴ էր ուղղուած 2014–17ի բոլոր գաղթի մեկնումների 92,5%ը, այնտեղից էին վերադարձ/ժամանումների՝ 94,1%ը, ՌԴում էր հանգրուանել ԱԳԳների 85,4%ը[29]:

Որպէս ուշագրաւ փաստ մատնանշենք, որ բացառութեամբ Իրանի եւ Սիրիայի, որոնցից եղել էր փոքրածաւալ ներհոսք, միւս բոլոր երկրների հետ գաղթը ընթացել էր արտահոսքով:

Որպէս առաւել քան մտահոգիչ երեւոյթ պէտք է գնահատուի, որ անգամ ՀՀ ընտանիքների արտերկրից նիւթական մուտքերի (3/4ովդով արտագնաների վաստակած գումարներից ձեւաւորուած), համախառն եւ միջին մեծութիւնների նուազման միտումի դադարը եւ նոյնիսկ նշանակալից աճի ի յայտ գալը, ի վիճակի չեն եղել կանխարգելելու գաղթի միջոցաւ աղքատութեան աճի զսպման, բնակչութեան տնտեսական վիճակի բարելաման գործօնի դերի թուլացումը:

Ուշագրաւ է որ հետազօտական տուեալներով, ՀՀ ընտանիքների արտերկրից մուտքերի համախառն մեծութիւնը՝ բացառապէս ՌԴ տնտեսական դրութեան 2014ին տեղի ունեցած կտրուկ վատացմամբ եւ ռուբլու գրեթէ կրկնակի արժեզրկման հետեւանքով, 2013ի շուրջ 450 մլն. ԱՄՆ

դոլարից[30] նուազել է 2015ին՝ 244,8 մլն.ի, 2016ին՝ 201,1 մլն.ի: 2017ին այն ոչ միայն չէր նուազել, այլեւ աճելով 16,7%, կազմել էր 234,6 մլն.[31]:

Ասուածի առաւել քան պերճախօս վկայութիւնն է գաղթած ունեցող եւ գաղթած չունեցող ընտանիքների աղքատութեան մակարդակի բնութագրիչների շեղուածութեան (յօգուտ առաջինների), նուազման միտման շարունակումը:

Արդարեւ, եթէ 2013ին գաղթած ունեցող ընտանիքների շրջանում աղքատ ու ծայր աղքատ ընտանիքների գումարային տեսակարար կշիռը կազմելով 33,6%, զիջում էր գաղթած չունեցող ընտանիքների նոյն մեծութեանը 14,2%ով, ապա 2015ին՝ արդէն միայն 3,6%ով (յաջորդաբար 41,5% եւ 45,1%), 2017ին՝ ընդամէնը 2,1%ով (յաջորդաբար 39,3% եւ 41,4%):

Այսինքն, գաղթած չունեցող ընտանիքների աղքատութեան մակարդակի 2013–17ին 6,4%ով նուազման պայմաններում, գաղթած ունեցողների մօտ այն 5,7%ով աճել էր:

Էլ աւելի տպաւորիչ ու դրանով հանդերձ մտահոգիչ է գաղթած ունեցող ընտանիքների աղքատութեան խորութեան ցուցանիշի (ծայր աղքատների բաժինն աղքատների ընդհանուր թւում), շարժի յետագիծը. 2013ի 22,6%ից՝ աճելով 42,4%ի՝ 2015ին եւ 45,9%ի՝ 2017ին, այն անգամ սկսել է գերազանցել գաղթած չունեցող ընտանիքների մեծութեանը՝ 39,6%[32]:

Հետեւաբար, հիմքեր կան կարծելու, որ գաղթի գործընթացներում՝ նախեւառաջ աշխատանքային, ներառուածութիւնը, ներկայումս ոչ միայն ընտանիքների նիւթական վիճակի բարելաւման անվերապահ երաշխիք չէ, այլեւ որոշակի իմաստով աղքատացման, ընդ որում՝ առաւելապէս 'ծայր' աստիճանի, վտանգ պարունակող վտանգային հանգամանք է:

Արձանագրելով սա, միաժամանակ հարկ է նշել, որ այն չի կարող եւ չպէտք է ընկալուի որպէս տուեալ առումով գաղթի (առաւել եւս աշխատանքային), միանշանակ բացասական լինելու փաստարկ, քանզի ապահովելով գաղթած ունեցող ընտանիքների համակցութեան նիւթական մուտքերի աւելի քան 35%ն ու դրանով իսկ հանդիսանալով նրանց եկամուտների կարեւորագոյն աղբիւրը, այն գործնականում չունի քիչ թէ շատ ընդունելի այլընտրանք[33]:

Աւելին, նկատի ունենալով, որ նախորդ տարիների համեմատ նման ընտանիքների կողմից այդ մուտքերի գումարներն անգամ աւելի յաճախակի են ուղղուել այսպէս կոչուած 'անխուսափելի/պարտադիր' կարիքների յոդուածներին, եւ որ նրանց թւում չափազանց փոքր են մնում այդ գումարներից տնտեսական եւ ընկերային բարգաւաճման համար կարեւոր, սակայն 'ոչ-պարտադիր' բնոյթ կրող յոդուածներով ծախսեր անողների բաժինները, դժուար չէ պատկերացնել, թէ ինչ անմխիթար վիճակում կը յայտնուի նրանց մեծ մասը դրանց բացակայութեան/դադարի դէպքում:

Ըստ 2017ի հետազօտութեան, արտերկրից մուտքեր ունեցած գաղթած ունեցող ընտանիքների համակցութիւնը, դիտարկմանը նախորդած մէկ տարում այդ մուտքերի համախառն գումարի 77,7%ը ծախսել է 'անխուսափելի/պարտադիր' բնոյթ կրող հետեւեալ 4 կարիքների բաւարարման վրայ.- ա) սնունդ/հագուստ՝ 35,1% (տուեալ յօդուածով այդ գումարներից ծախս է արել նրանց 85,2%), բ) հանրային ծառայութիւնների վարձեր/ջեռուցում՝ 17,9% (72,1%), գ) պարտքերի/ վարկերի մարում՝ 16,6% (41,8%), դ) առողջապահութիւն՝ 8,1% (34%):

Այսինքն, մնացած բոլոր կարիքների բաւարարման է ուղղուել գումարի ընդամէնը ¼ից էլ պակասը: Այդ գումարի միայն 4,1%ն է ուղղուել կրթական կարիքներին, 3,4%ը՝ կացարանային/կենցաղային պայմանների բարելաւմանը, 1,6%ը՝ գործարարական ներդրումներին, 0,1%ը՝ ազատ ժամանցին/հանգստին[34]:

Այսպիսով՝ առկայ են բոլոր հիմքերն եզրակացնելու, որ շարունակւում է արտերկրից ստացուող մուտքերի՝ մնացորդային սկզբունքով տնօրինումը: Փաստօրէն, ներկայումս եւս դրանցով հիմնականում գոյատեւման՝ պարզ վերատադրութեան խնդիր է լուծւում: Ինչ վերաբերում է մարդկային եւ տնտեսական/նիւթական դրամագլխի զարգացմանը, ֆիզիկական դրամագլխի ընդլայնմանը նպաստելու դրանց ներուժին, ապա այն սահմանափակ է:

Ըստ 2017ի հետազօտութեան տուեալների՝ բնակչութեան ընդհանուր թւում ԱԳԳների տեսակարար կշռի - կամ որ նոյնն է արտագաղթի աշխուժութեան - նուազումը (որը բնորոշ էր գրեթէ բոլոր ընկերային-ժողովրդագրական խմբերին), ոչ միայն դադարել է, այլեւ փոխուել է այնպիսի աճի (2016ի ընդհանուր առմամբ 5,1%ից՝ 6,7%ի), որ անգամ մօտ 1%ով գերազանցուել է 2015ի բաւական բարձր մակարդակը:

Այս անցումը սակայն չի ուղեկցուել առանձին ընկերային-ժողովրդագրական խմբերի արտագաղթի աշխուժութեան շեղուածութիւնների բնոյթի եւ սահմանանիշների քիչ թէ շատ նշանակալից փոփոխմամբ: Տուեալ ցուցանիշի մեծութեամբ շարունակում են միջինին զիջել կանայք, երեւանաբնակները, 0–17 ու 63 եւ աւել տարեկանները, տարրական եւ ցածր կրթամակարդակ ունեցողները, աշխատող-ինքնազբաղուածներից զատ ընկերատնտեսական կարգավիճակի միւս բոլոր խմբերը, պետական ոլորտի վարձու աշխատողները եւ գիտատնտեսական ինքնազբաղուածները, գիտատնտեսութիւն, պետական կառավարում, կրթութիւն/գիտութիւն եւ առողջապահութիւն ոլորտներում զբաղուածները, զինուորականները, նուազագոյն՝ ամսական մինչեւ 50,000 եւ 50-100,000 դրամ, աշխատավարձ ունեցողները (0,1-4,3%):

Արտագաղթի աշխուժութիւնը միջինից բարձր է տղամարդկանց (11,5%), ՄՈՒ ընտանիքների անդամների (16,7%), 25-44 տարեկանների (11,8%), եւ 45-54 տարեկանների (9,6%), միջնակարգ կրթամակարդակ

ունեցողների (9,5%), աշխատող-ինքնազբաղուածների (14,9%), առանց վարձատրման աշխատողների (19,1%), արդիւնաբերութիւն, առեւտուր/նորոգում եւ այլ ծառայութիւններ ոլորտներում զբաղուածների (11,4-12,7%), գրասենեակային ծառայողների (9,9%), որակաւորուած ոչ-գիւղատնտեսական բանուորների (18,4%) շրջանում:

Առաւել քան յատկանշական է, որ ցուցանիշի բարձրանիշային մեծութիւնները մասնաւոր ոլորտի վարձու աշխատողների (28,3%), շինարարութիւնում զբաղուածների (67,8%), 200-300,000 (43,9%), եւ 300,000 եւ աւել (68,5%), դրամ ամսական աշխատավարձ ունեցողների մօտ են[35]:

Ի տարբերութիւն արտագաղթի աշխուժութեանը, ինչպէս ընդհանուր առմամբ, այնպէս էլ ընկերային-ժողովրդագրական խմբերի մեծ մասի մօտ, շարունակուել է արտագաղթի ներուժի նուազման միտումը, սակայն արդէն աւելի մեղմօրէն:

Այս դիտարկմանը յաջորդող 12 ամիսներին գաղթի ծրագրողների բաժինը նուազել է 2015ի՝ 7,2%ից 4,8%ի՝ 2016ին եւ 4,3%ի՝ 2017ին: Տուեալ առումով բացառութիւն են կազմել միայն գաղթած ունեցող ընտանիքների անդամները եւ գիւղաբնակները: Նրանց մօտ, 2016ի համեմատ, հաւանական արտագաղթողների բաժիններն աւելացել են (յաջորդաբար 7,6%ից 7,8%ի եւ 3,3%ից 4,8%ի): Սա կարող է բացատրուել, երեւի թէ, միայն նրանով, որ արտագաղթ էր ծրագրում նրանցում զգալի տեսակարար կշիռ կազմող բազմակի արտագնաների այն մասը, որը 2017ին այս կամ այն պատճառով ձեռնպահ էր մնացել մեկնելուց[36]:

Բնակչութեան առանձին խմբերի արտագաղթի ներուժը, կամ՝ հաւանական արտագաղթի աշխուժութիւնը եւս մնում է տարբերակուած, սակայն անհամեմատ պակաս չափով: Այս առնչութեամբ կարեւոր է մատնանշել հետեւեալը.-

- Մտահոգիչ է բարձրագոյն կրթութիւն ունեցողների բաւական բարձր արտագաղթելու ներուժի պահպանումը: Նրանց գաղթելու ծրագրերի նոյնիսկ ոչ-լրիւ իրականացումը, եթէ անգամ չի բերի 'ուղեղների արտահոսքի' վերայառնմանը, ապա լուրջ խնդիրներ կ'առաջացնի երկրում բարձր որակաւորում պահանջող աշխատատեղերի համալրման գործում:
- Չնայած նախորդ տարուայ համեմատ աշխատող/ինքնազբաղուած խմբի կազմում արտերկրում գտնուողների բաժնի զգալի աւելացմանը (գրեթէ 15%, նախորդ տարուայ մօտ 11%ի դիմաց), նրա արտագաղթելու ներուժն էապէս չի պակասել (2016ի 4,3%ից՝ 3,5%ի), ինչը նշանակում է, որ ՀՀում աշխատանք ունենալը, ընդհանուր առմամբ, դեռեւս մնում է արտագաղթելու մտադրութիւնից զերծ մնալու ոչ-բաւարար ազդեցիկ գործօն:

- Որպէս մտահոգիչ պէտք է գնահատուի նաեւ գործատուների եւ գիւղատնտեսական ինքնազբաղուածների միջինից բարձր արտագաղթելու ներուժ ունենալու հանգամանքը.
- Եթէ արտագաղթելու փաստացի աշխուժութեան մակարդակն ուղիղ համեմատական է արտերկրային աշխատանքային վաստակի մեծութեանը, ապա արտագաղթելու ներուժը՝ հակադարձ համեմատական է հայաստանեան աշխատանքի վաստակի մեծութեանը: Դա է վկայում այն, որ ամենաբարձր՝ ամսեկան 300 եւ աւելի հազար ՀՀ դրամ, վաստակների 68,5%ը բաժին է ընկնում արտերկրում աշխատողներին, եւ, որ ՀՀում նման վաստակ ունեցողների մօտ գրեթէ չկան արտագաղթել ծրագրողներ:

Վկայելով ՀՀում մանր ու միջին ձեռներէցական գործունէութեան պայմանների ոչ-այնքան բարենպաստ մնալու մասին՝ սա վերահաստատում է, որ այժմէական է մնում դեռեւս 2013ի հետազօտութեան արդիւնքների հիման վրայ արուած եզրայանգումը, թէ՝ «... *մասնաւոր ձեռներէցին արտագաղթելու դրդող գործօնների գիտական հետազօտումը, վերլուծումը եւ գնահատումը, դրանց ազդեցութեան նուազեցման ներուժ պարունակող միջոցառումների մշակումը եւ գործարկումը ներկայումս խիստ կարեւոր պետական խնդիրներ են*»[37]:

Արտագաղթել ծրագրողների մեկնումի հաւանական գործօն լինելու էին.- 1) աշխատանքային նպատակները (աւելի քան 50%ինը), 2) ընտանեկան նպատակները (գրեթէ 30%ինը): Ի սկզբանէ մշտական բնակութիւն հաստատելուն էր միտուած նրանց 13,1%ը:

Յատկանշական է, որ տղամարդկանց եւ կանանց մօտ այս յարաբերակցութիւնները մեծապէս տարբեր են: Նոյն յաջորդականութեամբ. տղամարդիկ՝ 65,5%, 20,2% եւ 12,2%, կանայք՝ 31,5%, 28,9% եւ 27,6%[38]:

Ծրագրուող գաղթի կայացման բաւական բարձր հաւանականութեան օգտին է վկայում այն, որ արդէն դիտարկման պահին հաւանական արտագաղթողների գրեթէ բոլոր ընկերային-ժողովրդագրական եւ վարչատարածքային խմբերի ներկայացուցիչների զգալի մասը (ամբողջի, տղամարդկանց, կանանց եւ այլ քաղաքաբնակների աւելի, քան ¼ը դրները, ՄՎ ընտանիքների անդամների եւ երեւանաբնակների անգամ գրեթէ եւ աւելի քան 1/3ը դրները) գաղթի նպատակով ուղեւորութեան առնչութեամբ որոշակի քայլեր (տոմսի գնում, աշխատանքի եւ կամ կացարանի մասին պայմանաւորուածութիւն եւն.) արդէն ձեռնարկել էր:

Արտագաղթել ծրագրողների գրեթէ կէսը դրա իրականացման գործում կա՛մ արդէն ունէր եւ/կա՛մ ակնկալում է առնուազն որեւէ մէկ հարցում ունենալ աջակցութիւն: Առաւել մեծ էին «աշխատանքի» եւ «կացարանի» հարցերում աջակցութիւն/օգնութիւն ստացածների/ակնկալողների բաժինները: Օգնութեան մեծ մասը տրամադրուել/տրամադրուելու էր արտերկրեայ ընկերային ցանցերից:

Արտագաղթել ծրագրողների գերակշիռ մասի (85,3%) նշանակէտ երկիրը ՌԴն էր: Հաւանական արտագաղթողների աշխարհագրական ենթահոսքերում վերադարձի առաւելագոյն եւ նուազագոյն հաւանականութիւն ունեցողների յարաբերակցութիւնները տարբերակուած էին. ՌԴ՝ յաջորդաբար 58,7% եւ 41,3%, եւրոպական երկրներ՝ 36,5% եւ 63,5%, Հիւսիսային Ամերիկա՝ 11,8% եւ 88,2%, այլ երկրներ՝ 49% եւ 51%:

Հաւանական արտագաղթողների հաւաքական կարծիքը չգաղթելու բաւարար պայման էր համարում 2017ի Յուլիսի 1ի դրութեամբ ՀՀ միջին ամսական աշխատավարձի անուանական (մօտ 190,700 ՀՀ դրամ[39]) եւ մաքուր (132,500 ՀՀ դրամ) մեծութիւններից մօտ 1,9 եւ գրեթէ 2,7 անգամ աւել՝ 354,100 ՀՀ դրամի (ներկայ հաշուարկով մօտ 735 ԱՄՆ դոլար), ամսական մաքուր եկամուտ ունենալը:

Հաւանական գաղթողների եւ ԱԳԳների ըստ առանձին ընկերային-ժողովրդագրական յատկանիշների բաշխման համամասնութիւնների շեղումների բնոյթը եւ խորութիւնը, որոշակի հիմքեր է տալիս չբացառելու մօտակայ տարիների ընթացքում գաղթի գործընթացների քանակական բնութագրիչների այս կամ այն չափով նշանակալից փոփոխութիւնների հնարաւորութիւնը:

Ընկերաժողովրդագրական խմբերից հաւանական գաղթողներն ու ԱԳԳները (տուեալ յաջորդականութեամբ)[40] ունեն հետեւեալ պատկերը.-

- Տղամարդիկ՝ 56,3% եւ 84,3%.
- Կանայք՝ 43,5% եւ 15,7%.
- Աշխատանքային տարիքի անձինք՝ 70% եւ 91,7%.
- Բարձրագոյն եւ աւել կրթամակարդակ ունեցողներ՝ 27,3% եւ 20%.
- Աշխատանք/ինքնազբաղուածութիւն ունեցողներ՝ 29,4% եւ 81%.
- Աշխատանք/ինքնազբաղուածութիւն չունեցողներ՝ 27,8% եւ 8,3%:

Հետազօտական տուեալների վկայութեամբ, աշխատանքային/տնտեսական պատճառների համալիրի արտագաղթի դրդող վճռորոշ գործօն լինելու յատկանիշը պահպանուել է: Սակայն, դրա բաղադրամասերը կազմող բուն աշխատանքային պատճառների (աշխատանք չգտնելը/չունենալը եւ աշխատանքային վատ պայմանները) ազդեցիկութեան աստիճանի նուազման եւ առաւելապէս տնտեսական բնոյթի պատճառների (աւելի լաւ/բարձր վարձատրութեամբ աշխատանքը եւ ընտանիքի համար գումար վաստակելը) ազդեցիկութեան աստիճանի աճի բերումով, առաջինները, երկրորդներին են զիջել արտագաղթի դրդող առաւել նշանակալից պատճառի դերը:

Սա նշանակում է, որ եթէ ներկայումս ՀՀում աշխատանքի խնդիրը ոչ-մեծ չափով մեղմացել է (կարելի է կարծել ոչ-այնքան աշխատատեղերի առաջարկի աւելացման, որքան նոյնինքն զանգուածային արտագնացութեան բերումով պահանջարկի նուազման բերումով), ապա աշխատան-

քային վաստակների, բնակչութեան եկամուտների հիմնահարցը՝ հակառակը սրուել է:

Արտագաղթածների պատճառների նշանակալիութիւնը, որպէս կանոն այս կամ այն չափով աւելի փոքր է, քան աշխատանքային/տնտեսականներինը, ընդ որում տարբեր ընկերա-ժողովրդագրական համակցութիւնների մօտ դրանց շեղուածութիւնների խորութիւնն ուղիղ համեմատական է արտագնաների եւ հակադարձ համեմատական՝ կանանց մասնաբաժինների մեծութիւններին:

Եթէ արտագնաների առաւել բարձր եւ կանանց առաւել ցածր մասնաբաժիններ ունեցող ԱԳԳների ամբողջ համակցութեան դէպքում արտագաղթի ընտանեկան եւ բարոյահոգեբանական պատճառների համալիրները նշանակալիութեամբ զիջել են աշխատանքային/տնտեսական համալիր պատճառին՝ համապատասխանաբար՝ 12,1 եւ 27 անգամով, ապա արտագնաների է՛լ աւելի բարձր մասնաբաժին ունեցող տղամարդ ԱԳԳների դէպքում՝ 36,2 եւ 33,6 անգամով, արտագնաների սահմանափակ մասնաբաժին ունեցող կին ԱԳԳների դէպքում՝ արդէն միայն 1,2 եւ 6,5 անգամով:

Յատկանշական է, որ այս օրինաչափութիւնը՝ արտագնաների զգալիօրէն ցածր ու կանանց էապէս բարձր մասնաբաժինների բերումով ընդգծուած կերպով եւ կանանց մօտ ընտանեկան պատճառներով մեկնում ծրագրողների գերբարձր մասնաբաժնով (52%՝ աշխատանքային/տնտեսական պատճառներով մեկնում ծրագրողների միայն 49,7%ի դիմաց), պայմանաւորուած մէկ բացառութեամբ, բնորոշ է նաեւ հաւանական գաղթականների համակցութեանը (նոյն յաջորդականութեամբ 2,1 եւ 5,8, 4 եւ 7,7, 0,9 եւ 3,6 անգամներ)[41]:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Որպէս ամփոփում կարելի է արձանագրել, որ ՀՀ մերօրեայ գաղթը գրեթէ բոլոր առումներով լինելով այս կամ այն չափով անբարենպաստ, ընդհանուր առմամբ պէտք է գնահատուի որպէս խիստ խնդրայարոյց՝ եթէ չասենք ճգնաժամային:

Նման գնահատականի հիմնաւորուածութեան լրացուցիչ փաստարկ է հանդիսանում այն, որ արմատական համակարգային բարեփոխումների բացակայութեան պայմաններում մօտակայ տարիներին դրանում կատարուող տեղաշարժերը անխուսափելիօրէն կ'ունենան հետեւեալ՝ անվերապահօրէն անցանկալի, ուղղուածութիւնը.-

- Գաղթած չունեցող ընտանիքների անդամների խմբաքանակների շարունակաբար գաղթելու գործընթացներում ներքաշուելու բերումով (սկզբնապէս հիմնականում որպէս ժամանակաւոր արտագնաներ), աշխատանքային գաղթական հոսքերի ծաւալների առնուազն չնուազում.

- ԱԳԳների շրջանում՝ առաւելապէս աշխատանքային տեւականների թուից, մշտական բնակութեան մնալու եւ ընտանիքի արտերկիր տեղափոխման վճիռ կայացնողների բաժինների հետեւողական աւելացման բերումով անվերադարձ հոսքի աճի շարունակում:

Ակնյայտ է, որ նման հեռանկարը կը նշանակի Հայաստանի Հանրապետութեան արդէն իսկ մեծապէս տկարացած (այդ թւում զգալի չափով նաեւ յետխորհրդային արտաքին գաղթի գործընթացների արդիւնքում), ժողովրդագրական, քաղաքական, ընկերային եւ տնտեսական ներուժի նուազման շարունակում, դրանից բխող՝ որպէս կանոն միանշանակ բացասական, երկրորդային հետեւանքների համալիրով հանդերձ:

Յապաւումների ցանկ

ԱԳԳ	Արտերկրում գտնուող գաղթական
ԱՊՀ	Անկախ Պետութիւնների Համագործակցութիւն
ԱՄԿ	Աշխատանքի միջազգային կազմակերպութիւն
ԴՅԺ	Դիտարկման յետահայեաց ժամանակահատուած
ԵԱՏՄ	Եւրասիական տնտեսական միութիւն
ԵՄ	Եւրամիութիւն
ԽՍՀՄ	Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւնների Միութիւն
ՀԽՍՀ	Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւն
ՀՀ	Հայաստանի Հանրապետութիւն
ՀՀ ԱՎԾ	ՀՀ Ազգային վիճակագրական ծառայութիւն
ՄԱԿ	Միաւորուած ազգերի կազմակերպութիւն
ԳՄԿ	Գաղթականութեան միջազգային կազմակերպութիւն
ՌԴ	Ռուսաստանի Դաշնութիւն
ՎԱ	Վերադարձած արտագաղթած

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] ԽՍՀՄ հանրապետութիւնների միջեւ մեկնում/ժամանումներ:

[2] Արտասահմանեան երկրներ/ից մեկնում/ժամանումներ:

[3] Այսուհետ՝ արտագնաներ:

[4] Л.М. Гомкцян, "Закономерности Миграции Населения в Армянской ССР (Статистическо-Эконо-Мически Анализ)" (Լ.Մ. Գոմկցեան, «Բնակչութեան գաղթի օրինաչափութիւնները ՀՍՍՀում. վիճակագրատնտեսական վերլուծութիւն») աւարտաճառ տնտեսական գիտութիւններու թեկնածութեան, Մոսկուա, 1978:

[5] http://osce.mfa.am/hy/overview-OSCE/ :

[6] Ц.А. Карапетян, Р.Л. Овсепян, "Региональные Особенности Социально-Демографического Развития Армянской ССР" (Ց.Ա.Կարապետեան եւ Ռ.Լ. Յովսէփեան, «ՀԽՍՀ ընկերատնտեսական, ժողովրդագրական, տեղական օրինաչափութիւնների զարգացումը»), Երեւան, "Հայաստան", 1986, էջ 216:

[7] *Հայկական ԽՍՀ Արտաքին Միգրացիայի Համալիր Հետազոտութիւն*, ՀԽՍՀ Աշխատանքի եւ Զբաղուածութեան Պետական Կոմիտէ, ՀԽՍՀ Պետպլանի ՏՊԳՀԻ, Երեւան, 1985:

[8] Ասուածը վերաբերում է բացառապէս կամաւոր, այլ ոչ-հարկադիր գաղթին:

[9] Ս. Կարապետեան, Ն. Շահնազարեան, Ռ. Եգանեան, *Հայաստանի Բնակչութեան Միգրացիան Եւրխորհրդային Շրջանում*, UNFPA, Անկախ Հետազոտական Խումբ, Երեւան, 1996:

[10] http://hdr.undp.org/en/content/migration-and-human-development, էջ 29:

[11] http://hdr.undp.org/en/content/migration-and-human-development, էջ 37:

[12] Р. Еганян, Л. Давтян, *Оценка Внешней Миграционной Ситуации в Республике Армения. Сборник Материалов Международного Семинара "Демография Армении на Стыке Тысячелетий"* Дилижанские чтения 2000 (Ռ. Եգանեան եւ Լ. Դաւթեան, «Արտագաղթի իրավիճակի գնահատումը ՀՀում. միջազգային սեմինարի նիւթերի ժողովածու՝ «Հայաստանի ժողովրդագրութիւնը» հազարամեակի եզրին, դիլիջանեան ընթերցումներ 2000») , UNFPA, Երեւան, 2001, էջ 30-37:

[13] http://hdr.undp.org/en/content/migration-and-human-development, էջ 38:

[14] http://hdr.undp.org/en/content/migration-and-human-development, էջ 39:

[15] Առաջ անցնելով նշենք, որ նախ եւ առաջ Հայաստանի սահմանափակ հնարաւորութիւնների պատճառով այս ներհոսքի մեծ մասն այդպէս էլ պաշտօնապես ընդունուած կարգով վիճակագրական հաշուառման չկանգնելով, արդէն մեկնել է կամ պատրաստում է/մտադիր է մեկնել արտերկիր:

[16] Որպէս 'ընկերակենցաղային' գաղթողներ են բնորոշուած նրանք, ովքեր արտերկրում (գլխաւորապէս ՌԴում), ունենալով ընկերային կարողութիւն /ցանցեր ժամանակաւոր հեռացել էին երկրից արտառոց ընկերակենցաղային պայմանների (հովհարային անջատումներ, փոխադրամիջոցների տապալում եւն.) իրավիճակի կարգաւորմանն արտերկրում սպասելու մտադրութեամբ:

[17] http://hdr.undp.org/en/content/migration-and-human-development, էջ 39-40:

[18] Կարապետեան, Շահնազարեան, Եգանեան:

[19] Ըստ նախորդ աղբիւրի տուեալների, միջին մասնագիտական եւ բարձրագոյն կրթութիւն ունէին այս փուլի գաղթականների 46,4%ը, միջին կրթութիւն՝ միայն 37.9%ի դիմաց:

[20] http://hdr.undp.org/en/content/migration-and-human-development, էջ 40:

[21] *Հայաստանի Հանրապետութեան 1991-1998թթ. Արտաքին Միգրացիայի Գործընթացի Ուսումնասիրութիւն*, ՀՀ ՎՆ, TACIS, Եւրոստատ, 'Լուսաբաց-04', Երեւան, 1999:

[22] Հայաստանի այդ տարիների արտագաղթի մասին պատկերացում են տալիս հետեւեալ աղբիւրները.- http://www.armstat.am/file/article/rep_migr_08a.pdf , http://employment.am/up/attach/attach_arm10.pdf , http://rau.am/uploads/blocks/3/31/3115/files/Migration_Project_Report_final.pdf :

[23] http://www.armstat.am/file/article/demog_2017_2.pdf :

[24] http://science.rau.am/rus/8/3592, 2017 :

[25] http://science.rau.am/rus/8/3592 , 2017, գծապատկեր 3.1.2 :

[26] http://science.rau.am/rus/8/3592, 2017, բաժին 3.2 :

[27] http://science.rau.am/rus/8/3592, 2017, աղյուսակ 3.2.3 :

[28] Նշենք, որ եթէ տուեալ աճը լինէր պակաս-նշանակալից, ապա այս առումով տեղ գտած երկրորդ տեղաշարժը՝ գաղթի բացասական մնացորդի կառուցուածքում մշտական հոսքի բաժնեմասի նուազումը (2002–13՝ մօտ 50%ից, 2014–16ին՝ 42,6%ի), կարելի կը լինէր գնահատել, որպէս դրական երեւոյթ:

[29] http://science.rau.am/rus/8/3592 , 2017, աղիւսակ 3.2.4 :

[30] http://rau.am/uploads/blocks/3/31/3115/files/Migration_Project_Report_final.pdf, բաժին 3.5 :

[31] http://science.rau.am/rus/8/3592 , 2017, գծապատկեր 3.3.11 :

[32] http://science.rau.am/rus/8/3592 , 2017, աղիւսակ 3.3.1 :

[33] http://science.rau.am/rus/8/3592 , 2017, 3.3 :

[34] http://science.rau.am/rus/8/3592 , 2017, աղիւսակներ 3.3:5 եւ 3.3.6 :

[35] http://science.rau.am/rus/8/3592 , 2017, 3.4 :

[36] http://science.rau.am/rus/8/3592 , 2017, 3.4 :

[37] http://rau.am/uploads/blocks/3/31/3115/files/Migration_Project_Report_final.pdf, 3.6, էջ 66:

[38] http://science.rau.am/rus/8/3592 , 2017, գծապատկեր 3.4.9 :

[39] https://168.am/2017/08/01/825972.html :

[40] http://science.rau.am/rus/8/3592 , 2017, 3.4 եւ 5.1 :

[41] Հաշուարկուած է http://science.rau.am/rus/8/3592 , 2017ի, աղիւսակներ 3.4.1 եւ 5.2.2ի տուեալների հիման վրայ:

MIGRATION FROM ARMENIA: QUALITATIVE AND NUMERICAL FACTS
(Summary)

RUPEN YEGANIAN
rubenyeg@mail.ru

One of the most critical developments in post-independent Armenia has been the non-stop emigration of its population. Estimates vary on the number of residentrs of the country who have left. However, at least one million Armenians have emigrated in the last quarter of a century. In proportion to its small population, this has been assessed as a large percentage that menaces the sustainability of the country.

The paper focuses in depth on this topic. It argues that emigration had started long before the country proclaimed independednce in 1991. The author notes that already during the pre-independence decades of 1960-1980s an outflow was observed. However this outflow was basically towards the Soviet countries. Besides, it was tiny and did not affect the yearly trend of demographic increase by tens of thousands. The author analyses and qualifies the nature of this outflow and its impact on the demography of Soviet Armenia; this outflow was a seasonal economic migration, and most of the migrants returned to Soviet Armenia with cash that enhanced their living conditions in the country.

The second stage of this migratory trend is considered to be the 1988-1991 period, which is characterised by instability and marked by the 1988 earthquake, the self-determination war of Nagorno Karabagh, the disintegration of the Soviet Union and the proclamation of independece. The author assessses how these factors impacted the demographic shift in the country.

The next stage is considered the massive outflow period (1992-94), when some 980,000 people left the country and some 370,000 came in. The author notes that during the next stage of 1995-2001, some 600,000 emigrated and around 350,000 immigrated.

The period between 2002 and 2018 is considered to be the current stage. The author divides this period into sub-stages, details the demographic shifts and extensively analyses the nature of the migration, the profile of the migrants and their destination as well as both the reasons for and the impact of this outflow. He concludes that unless it is properly addressed, the migratory trend of the population of the Republic of Armenia will have a catastrophic imapct on the sustainability of the country.